յայտնապէս և չուեաց ի հոսմ. ժողովրդոցն տեսեալ և բերան ի բերան գնացեալ էհաս ականջս իշխանին. և իշխանն առ ի պարտաւորել զեպիսկոպոսն աւելի ևս գրեաց կայսերն զամենայն ինչ լիապէս. և ասեն իբրև ընթերցաւ զայն գիրն իշխանին իսկոյն յանկարծակի անկաւ մեռեալ ի գիրկս որդւոյն. վասն որոյ թագուհին խիղճմտանք առնելով կամի հաշտութիւն ընդ սուրբ եկեղեցին, զի ըստ կանոնաց ամենայն թագաւորք են ի բա[նադրանս]. ևն։ Նաբօլի քաղաքն այն տունն ամենասրբոց լիթանիային որ ասէ, զի զթշնամիս սրբոյ եկեղեցւոյ խոնարհեցուցանել հիճիցիս, փոխեալ են արակցելով այսպէս, զի զթշնամիս սրբոյ եկեղեցւոյ զտաճիկս և զհերետիկոսս խոնարհեցուցանել է ևն, որով յայտ առնեն զինքեանս թշնամի եկեղեցւոյ և երկնչին աղաչանացն ժողովրդեանն. զի խիղճմտանք իւրեանց վկայեն. լուայ զի թօսքանային կածեթան արգելեալ են վենետիկ, զիրաւն ծանոնինձ. դարձեալ լուայ զի կայսրն ի ճանապարհի կամելով երկու հաւկիթ, բախեաց զտուն միոյ գիւղացւոյ, և ի բախելն իւր գեղացին ելանէր արտաքս և կայսրն խնդրեաց ի նմանէ զվերոասացեալ ձուն. նա պատասխանեաց ոչ կարեմ առնել զայդ, զի գնալոց եմ որոնել կնքահայր մի վասն կնքելոյ զմանուկն իմ և ոչ գիտեմ առ ո՞ գնացից. պատասխանէ կայսրն, ես եղէց կնքահայր նմա. գեղեցին լուեալ զայս ասէ և ես գնացից որոնել զխընդրեա[լ]ն քոյ. յայնժամ կայսրն գրէ թուխթ մի առ իշխանն տեղւոյն այսպէս. ես իմբերադոր յուսեփ երկրորդ յանձնեմ քեզ մկրտել զայս և լինիլ կնքահայր ի տեղի իմ ամենայն պարագայիւք. և տուեալ գեղացւոյն ասէ, գնա առ իշխանդ և ցոյց նմա զայս գիր և նա մկրտէ ի տեղի իմ. և գրեալ էր ևս տալ մանկանն աւուրն մի դօլերօ մինչև ի մահ. և ինքն չուեաց ի ճանապարհ իւր. իշխանն զառաջինն ոչ հաւատայր քանզի ոչ ոք գիտէր թէ կայսր գնայր ի հոսմ, բայց յետոյ ստուգեալ զիրաւն, մկրտեաց զմանուկն ամենայն փառաւորութեամբ յանուն կայսերն. դարձեալ ասեն յորժամ էհաս ի պօլօնեա ոչ ոք ծանեաւ զնա. քանզի գնաց ի լօգանտա ուտել իբրև պարզ օֆիցիալ. բայց ի լօգանտան տեսանելով զի սպասաւորքն հանին վասն նորա բօսատա և գաւաթ ոսկի, զարմանային. և իբրև ելանէր ի կառս խնդրեաց թուխթ. և գրեաց ճենեբալ բալավիճինին և իշխանին քաղաքին այսպէս. յովսէփ երկրորդ իմբերադորն անցանելով ի քաղաքէդ ողջունէ ևն, և այնպէս բացեալ ետ լօգանտատեառն զի հասուցանիցէ նոցա. իբրև ընթերցաւ և իմացաւ թէ կայսրն է վաղվաղակի յանկաւ յոտս նորա. բայց նա թոեաւ գնաց և այսու կերպիւ իմացան. և կամիր գալ ի ֆիօրենցայ և ոչ կարաց վասն ոչ գտանելոյ ձիանս, քանզի աւուրք յառաջ քարտինալք անցեալ էին և առեալ էին զձիանս. վասն որոյ ընդ այլ ճանապարհ գնաց, և ամսուս 15.ին էհաս հոսմ. զկայսերական զգեստքն իւր բերին տեղս և մայր իւր բազում ինչ առաքեաց վասն կայսերն որպէս զի ցուցէ փառաւորութիւնս...։

Ֆիրէնցէ 18 Մարտ
1769

Նուաստ և անպիտան ծառայ
Միքայէլ Մուրատեան

ՄՁԵ.

Բ.

Վերապատուելի Տեառն Տեառն Հ. Մկրտիչ վարդապետին
կարօտիւ սիրոյ ողջոյն

... Թերևս լուեալ է ձեր մինչև ցայժմ, թէ կայսր, որդին մեծի թագուհւոյն եկն ի հոսմ յանծանօթս ի 15ն մարտի յաւուր չորեքշաբթի ի տասնումէկ ժամու առաւօտուն։ Թէպէտ ընդ բոլոր ճանապարհն եկն առանց զինքն յայտնելոյ ումիք, սակայն չև ևս եկեալ հասեալ ի հոսմ հրատարակեալ էր գալուստ նորա. քանզի մայրն նորա նունցիին ծանուցեալ էր զորմէ ի տան պուաչճեանոյի փրինչիպէին գանկատեաց ասեն զմօրէն իւրմէ. քանզի ինքն կամէր և ախորժէր յանծանօթս կալ. և յանծանօթս չրժիլ ընդ բոլոր հոսմ